

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ GEOGRAPHIC CHARACTERISTIC OF THE REPUBLIC OF ARMENIA



## Տ Ա Ր Ա Ծ Ք Ը TERRITORY

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Ասիայի հարավ-արևմուտքում: Գրավում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան հատվածը՝ Կովկասի և Առաջավոր Ասիայի միջև (Կուր և Արաքս գետերի միջին հոսանքների միջգետային տարածքը): Ընդհանուր տարածքն ընկած է հյուսիսային լայնության  $38^{\circ} 50'$  -  $41^{\circ} 18'$  -ի և արևելյան երկայնության  $43^{\circ} 27'$  -  $46^{\circ} 37'$  -ի միջև:

Հյուսիսից և արևելքից սահմանակից է Վրաստանին և Ադրբեջանին, իսկ արևմուտքից և հարավից՝ Թուրքիային և Իրանին:

Երկրի տարածքը կազմում է 29743 կմ<sup>2</sup>, որի 71.3%<sup>1</sup>-ը կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը, 10.3%-ը՝ անտառները, 7.7%-ը՝ հատուկ պահպանվող տարածքները և 10.7%-ը՝ այլ հողերը: ՀՀ տարածքի 36.4%-ը լեռներն են, բարձրավանդակներն ու այլ հողերը:

Երկրի ամենաբարձր կետը Արագած լեռնագագաթն է (4090 մ), ամենացածր կետը՝ Գեբեղ գետի կիրճը (390 մ): Ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք 360 կմ է, իսկ արևմուտքից արևելք՝ 200 կմ:

Republic of Armenia is situated in south-western part of Asia. The country occupies the north-eastern part of Armenian plateau – between Caucasus and Nearest Asia (the inter-river territory between the middle flows of Kur and Araks rivers). The total territory is located in the latitude of  $38^{\circ} 50'$  -  $41^{\circ} 18'$  N and longitude of  $43^{\circ} 27'$  -  $46^{\circ} 37'$  E.

In the north and east it borders with Georgia and Azerbaijan, and in the west and south - Turkey and Iran.

The country's area comprises 29743 km<sup>2</sup>, of which 71.3%<sup>1</sup> - agricultural land, 10.3% - forests, 7.7% - areas of special preservation and 10.7% - other lands. 36.4% area of RA are mountains, plateaus and other lands.

The highest elevation of the country is the Peak of Aragats Mountain (4090 m), the earth lowest point - the Debed river canyon (390 m). The longest extension from north-west to south-east is 360 km, and from west to east - 200 km.

<sup>1</sup> «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման 2007 թվականի հաշվետվության մասին (հողային հաշվեկշռի մասին)» ՀՀ կառավարության 2008թ. հունվարի 10-ի թիվ 7-Ն որոշման համաձայն: According to the RA Government Rezolution N 7-N dated 10 January 2008 “On 2007 report of Availability and Distribution Land of the Republic of Armenia (on Land balance)”.

**ԼԵՌՆԱԳԱԳԱԹՆԵՐԸ**  
**MOUNTAIN TOPS**

Անվանումը	Name	Տեղանքը	Place	Բարձրությունը ծովի մակերևույթից, մ The height above sea level, m
Արագած	Aragats	Արագածի լեռնազանգված	Aragats massif	4090
Կապուտջուղ	Kaputjugh	Զանգեզուրի լեռնաշղթա	Zangezur mountain range	3906
Աժդահակ	Ajdahak	Գեղամա լեռնաշղթա	Geghama mountain range	3598
Սպիտակասար	Spitakasar	Գեղամա լեռնաշղթա	Geghama mountain range	3555
Իշխանասար	Ishkhanasar	Ղարաբաղի բարձրավանդակ	Gharabagh plateau	3552
Վարդենիս	Vardenis	Վարդենիսի լեռնաշղթա	Vardenis mountain range	3522
Արամասար	Aramasar	Բարգուշատի լեռնաշղթա	Bargushat mountain range	3392
Բաղասար	Baghatssar	Մեղրու լեռնաշղթա	Meghri mountain range	3250
Խուստուփ	Khustup	Խուստուփ-Կատարի լեռնաշղթա	Khustup-Katar mountain range	3214
Լեգլի	Legli	Ջավախքի լեռնաշղթա	Javakhk mountain range	3157
Գոգի	Gogi	Վայքի լեռնաշղթա	Vayk mountain range	3113
Թեժ լեռ	Tej ler	Փամբակի լեռնաշղթա	Pambak mountain range	3101
Մեծ Եղնախաղ	Mets Eghnakhagh	Եղնախաղի լեռնաշղթա	Eghnakhagh mountain range	3042
Բովաքար	Bovakar	Հալաբի լեռնաշղթա	Halab mountain range	3016
Միափոր	Miapor	Միափորի լեռնաշղթա	Miapor mountain range	2993
Ուրասար	Urasar	Բազումի լեռնաշղթա	Bazum mountain range	2993
Քաշաթաղ	Qashatagh	Սևանի լեռնաշղթա	Sevan mountain range	2901
Արայի լեռ	Aray ler	Արայի լեռնազանգված	Aray massif	2577

Հայաստանը լեռնային երկիր է: Տարածքի 76.5%-ը գտնվում է ծովի մակերևույթից 1000-2500 մ բարձրության վրա: Լեռնաշղթաները գրավում են մոտ 14 հազ.կմ<sup>2</sup> տարածք կամ երկրի ընդհանուր մակերեսի 47%-ը: Բարձրավանդակները կազմում են երկրի մակերեսի ավելի քան 1/3-ը (11 հազ.կմ<sup>2</sup>):

Հայաստանի տարածքը յուրահատուկ երկրաբանական թանգարան է: Այստեղ կարելի է գտնել երկրակեղևում առկա համարյա բոլոր ապարները: Հայաստանի ընդերքը հարուստ է բազմազան օգտակար հանածոներով: Հրաբխային ժայթքումների հետևանքով գոյացել է բնական շինանյութերի՝ տուֆի, բազալտի, անդեզիտի, պեռլիտի և շինարարությունում օգտագործվող հանքանյութերի մեծ պաշար:

Armenia is a mountainous country. 76.5% of the republican territory is on the height of 1000-2500 m above sea level. Mountain ranges occupy about 14 ths. km<sup>2</sup> territory or 47% of the country's total surface. Plateaus comprise more than 1/3 (11 ths. km<sup>2</sup>) of country's surface.

Armenia's territory is an original geological museum. Here it is possible to find out those rocks that comprise the earth-crust. Large part the territory is covered by stratum of different type volcanic rock and tufa. Armenia's lithosphere is rich with various useful minerals. As a result of volcanic eruptions, a big reserve of natural building materials - tufa, basalt, andezite, perlite and other materials has been formed that is used in construction.

**ԽՈՇՈՐ ԳԵՏԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԻՎՐՈԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ<sup>1</sup>**  
**THE MAIN HIDROLOGIC CHARACTERISTIC OF THE LONGEST RIVERS<sup>1</sup>**

Գետերի անվանումը	River name	Երկարությունը, կմ Length, km	Միջին թեքությունը, % Average slope, %	Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ <sup>2</sup> Water collection surface, km <sup>2</sup>	Միջին տարեկան ելքը, մ <sup>3</sup> /վրկ Average annual flow, m <sup>3</sup> /sec	Միջին տարեկան հոսքը, մլրդ.մ <sup>3</sup> Average multi-year annual flow, bln. m <sup>3</sup>
Ախուրյան	Akhuryan	186	5.7	2784	7.35	0.23
Դեբեդ	Debed	154	11.0	3790	33.6	1.06
Հրազդան	Hrazdan	141	7.6	2560	26.0	0.82
Որոտան	Vorotan	111	21.0	2030	19.0	0.6
Արփա	Arpa	92	24.0	2080	14.0	0.44
Քասախ	Qasagh	89	29.0	1480	3.38	0.11

<sup>1</sup> Տրամադրվել է Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայության (ՊՈԱԿ) կողմից: Այն գետերի համար, որոնք դուրս են գալիս հանրապետության սահմաններից, տվյալները բերված են հանրապետության սահմանների մասով:

The information on the rivers that flow out bounds of the republic is presented only in terms of the terytory of the republic, presented from Armenian state hydrometeorological and monitoring service.

Գետերի անվանումը	River name	Երկարությունը, կմ Length, km	Միջին թեքությունը, % Average slope, %	Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ <sup>2</sup> Water collection surface, km <sup>2</sup>	Միջին տարեկան ելքը, մ <sup>3</sup> /վրկ Average annual flow, m <sup>3</sup> /sec	Միջին տարեկան հոսքը, մլրդ. մ <sup>3</sup> Average multi-year annual flow, bln. m <sup>3</sup>
Փամբակ	Pambak	84	13.0	1370	10.6	0.33
Աղստև	Aghstev	81	31.0	1730	10.2	0.32
Չորագետ	Dzoraget	67	22.0	1460	15.6	0.49
Գետիկ	Getik	58	29.0	586	3.53	0.11
Վեդի	Vedi	58	33.0	633	1.84	0.06
Արգիճի	Argichi	51	12.0	384	5.49	0.17
Գավառագետ	Gavaraget	50	25.0	480	3.44	0.11
Մասրիկ	Masrik	45	22.0	685	3.24	0.1
Ողջի	Voghji	43	68.0	788	11.0	0.35
Ազատ	Azat	40	31.0	572	4.88	0.15
Մեղրի	Meghri	36	63.0	336	2.89	0.09

**Լ Ա Ե Ր Ը**  
**LAKES**

(միջին տարեկան ցուցանիշներ / average annual indicators)

		Մակարդակի նիշ, մ Level mark, m	Ծավալը Volume	Հայելու մակերեսը, կմ <sup>2</sup> Mirror surface, km <sup>2</sup>
Սևանա	Sevan	1898.68	35.9 կմ <sup>3</sup> / կմ <sup>3</sup>	1260.4
Սև	Sev	2666	9 մլն. մ <sup>3</sup> / mln. m <sup>3</sup>	2.0
Ակնա	Akna	3032	3.91 մլն. մ <sup>3</sup> / mln. m <sup>3</sup>	0.8
Քարի	Qari	3190	357 հազ. մ <sup>3</sup> / ths. m <sup>3</sup>	0.3
Այրր	Ayghr	860	310 հազ. մ <sup>3</sup> / ths. m <sup>3</sup>	0.03
Կապուտան	Kaputan	3286	40.2 հազ. մ <sup>3</sup> / ths. m <sup>3</sup>	0.1

**ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ ԲԱՅԹՈՂՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ**  
**ԵՎ ԼՃԻ ՍԱԿԱՐԳԱԿԻ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ԱՄԻՄՆԵՐԻ**  
**WATER DISCHARGE FROM SEVAN LAKE BY YEARS AND VARIATIONS**  
**OF LAKE LEVEL BY MONTHS**

Տարիներ Years	Ջրի քանակությունը, մլն. մ <sup>3</sup> Water discharge, mln. cub. m	Լճի մակարդակը /մ/ և ամսական տատանումները /սմ/ Level of Lake (m) and monthly variations (sm)													Ջրի մակարդակի տատանումները տարվա վերջին օրերից, սմ <sup>1</sup> variations of water level during the year, sm <sup>1</sup>	
		մակարդակի ամսական տատանումները նախորդ ամսվա համեմատ, սմ monthly variations of level compared to the previous month, sm														
		հունվար January	փետրվար February	մարտ March	ապրիլ April	մայիս May	հունիս June	հուլիս July	օգոստոս August	սեպտեմբեր September	հոկտեմբեր October	նոյեմբեր November	դեկտեմբեր December			
2001	158.2	1896.46	+1	+1	+7	+13	+10	-2	-6	-12	-9	-8	-4	-5	1896.32	-14
2002	99.4	1896.32	+1	+10	+6	+15	+23	+18	+7	-6	-7	-6	-5	-5	1896.76	+44
2003	106.6	1896.76	+1	+5	+7	+22	+23	+14	-5	-3	-9	-1	-2	-4	1897.24	+48
2004	149.9	1897.24	+1.5	+3.5	+9	+17	+24	+16	+2	-10	-9	-6	+1	-6	1897.65	+41
2005	149.6	1897.66	+3	+2	+10	+16	+22	+12	-5	-5	-6	-3	-2	-3	1898.07	+41
2006	152.4	1898.07	+3	+2	+6	+23	+20	-2	-3	-11	-11	0	-6	-4	1898.25	+18
2007	154.6	1898.25	+2	+2	+6	+14	+36	+10	+3	-5	-10	-3	+1	-3	1898.79	+54

Հայաստանի տարածքում ամենամեծ լիճը Սևանա լիճն է (մակերեսը 1260.4 կմ<sup>2</sup>), ամենաերկար գետն Արաքսը՝ 158<sup>1</sup> կմ (ընդհանուր երկարությունը՝ 1072 կմ): In the territory of RA the largest lake is Lake Sevan (surface – 1260.4 km<sup>2</sup>), the longest river is Araqs (total length – 1072 km).

Հանրապետության ջրային պաշարները սահմանափակ են և տարեկան կազմում են ընդամենը 8.5 մլրդ. մ<sup>3</sup>, որից 6.54 մլրդ. մ<sup>3</sup>-ը մակերեսային հոսքն է: Հայաստանի գետերը հիմնականում լեռնային են, խիստ արտահայտված մեծեցյալի (սակավաջուր) հոսքերով: Republican water reserves are limited and annually comprise totally 8.5 bln. m<sup>3</sup>, of which 6.54 bln. m<sup>3</sup> - surface water flow. The rivers of Armenia are mainly mountainous with strongly expressed flows with little water.

ՀՀ տարածքում գտնվում են քաղցրահամ լճեր և ջրամբարներ՝ մոտ 35.8 մլրդ. մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով, որի մոտ 96%-ը կազմում է աշխարհի ամենաբարձր՝ that volume comprises one of the world highest

<sup>1</sup> Ըստ ամիսների հանրագումարի ինտ անհամապատասխանությունը պայմանավորված է ցուցանիշների կլորացմամբ: The discrepancy between the totals and sum by months is explained by using rounded data.

րադիր լեռնային լճերից մեկը՝ Սևանը, որը գտնվում էր ծովի մակերևույթից 1916 մ (մինչև իջեցումը) բարձրության վրա: Լճի ջրային պաշարները 2007թ. կազմել են մոտ 35.9 մլրդ. մ<sup>3</sup>:

Սևանա լիճը Հայաստանի բնության գարդն է (հնագույն անվանումը՝ Գեղամա ծով): Մեծ Սևանի առավելագույն խորությունը 42 մ է, Փոքր Սևանինը՝ 81 մ: Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակ, լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը:

Լիճն անտնտեսվար և անխնա օգտագործումից խիստ տուժել է և ջրային պաշարները զգալիորեն նվազել են: Լճի մակարդակի իջեցման, ինչպես նաև թափվող անբավարար մաքրված հոսքաջրերի հետեվանքով, կարուկ վատացել էր նաև ջրի որակը: Իրավիճակը մասնակիորեն մեղմացնելու և Սևանի ջրային պաշարներն Արփա գետի ջրերով ավելացնելու նպատակով, 1981թ. կառուցվել է 48 կմ 420 մ երկարությամբ «Արփա-Սևան» թունելը (առավելագույն խորությունը գետնի մակերեսից 1230 մ), որը լճի հետ միանում է 850 մ երկարությամբ բաց ջրանցքով:

Լճի պահպանության վերջին տարիների համալիր միջոցառումներն արդյունավետ իրականացնելու շնորհիվ, զգալիորեն բարձրացել է ջրի մակարդակը (2007թ. հուլիսի 21-ին արձանագրվել է մակարդակի բարձրացման առավելագույն նիշը՝ 1899.01 մ, որը 2002թ. համեմատ բարձր է 2.69 մ-ով):

mountainous lakes – the Lake Sevan, which is situated at the height of 1916 m (till abatement) above sea level. In 2007 its water reserves comprise about 35.9 bln. m<sup>3</sup>.

Sevan is adornment of nature of the Republic of Armenia (the ancient name is Geghama Sea). The utmost depth of Mets Sevan is 42 m, for Pokr Sevan - 81 m. 28 rivers and small rivers flow in Lake Sevan, only Hrazdan river originates from the lake. Sevan has strongly suffered from thrifless and neglected use and its water reserves have been considerably decreased. Sewages flowing in lake are not enough cleaned, also as a result of lowering of the lake level the water quality sharply has become worse as well. With a purpose to partly soften the negative consequences, the Arpa-Sevan tunnel with the length of 48 km 420 m (the utmost depth above land level is 1230 m) has been turned over for operation in 1981 and an attempt was made to increase the Sevan lake water reserves with Arpa river waters, the tunnel is connected with the lake through the open channel with the length of 850 m.

During last years after productive arrangements of lake conservancy, the water level grew up (in 01.07.2007 the water level is about 1899.01 m, it is 2.69 m higher compared with 2002).

**ԱՐՋԵՍՏԱԿԱՆ ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՋՐԻ ՀԱՅԵԼՈՒ ՄԱԿԵՐԵՍԸ**  
**VOLUMES OF ARTIFICIAL RESERVOIRES AND WATER MIRROR SURFACE**

		Ծավալը, մլն. մ <sup>3</sup> Volume, mln. m <sup>3</sup>	Հայելու մակերեսը, հա Mirror surface, ha
Ախուրյան	Akhuryan	525.0	4180
Սպանդարյան	Spandaryan	257.0	1025
Թոլորս	Tolors	96.0	480
Ապարան	Aparan	91.0	735
Ազատ	Azat	70.0	285
Ջողազ	Joghaz	45.0	230
Հեր-Հեր	Her-Her	26.0	115
Կեչուտ	Kechut	25.0	135
Կառնուտ	Karnut	24.7	234
Գեղի	Geghi	15.0	35
Շամբ	Shamb	13.6	112
Հախում	Hakhum	12.0	83
Մանթաշ	Mantash	8.2	76.4
Թավշուտ	Tavshut	6.0	60
Սևաբերդ	Sevaderd	6.0	45
Ախպարա	Akhpara	5.6	170
Հալավար	Halavar	5.5	38
Մեծավան	Metsavan	5.4	330
Տավուշ	Tavush	5.3	40
Արփի	Arpi	5.0	450
Վարդաքար	Vardakar	5.0	86
Սառնաղբյուր	Sarnaghbyur	4.9	56
Երևանյան	Yerevanyan	4.8	95
Ակնալիճ	Aknalich	3.9	53
Դավիթ Բեկ	David Bek	2.5	14
Արծվաշեն	Artsvashen	2.0	26
Գեղարդալիճ	Geghardalich	1.5	25
Քարահունջ	Qarahunj	1.3	18.3
Ծիլքար	Tsilkar	1.2	26
Հագաշեն	Hatsashen	1.1	37